ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» հոկտեմբերի 2017 թվականի N 28

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 46.2 հոդվածի «ա» կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 3-ի N 57 որոշումը և համայնքի բնակիչ Վարդան Արշավիրի Ղազարյանի դիմումը՝ համայնքի ղեկավարը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Բաղրամյան փողոցի թիվ 19/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 04-069-0516-0002 ծածկագրով 19,7 քմ /0,00197 հա/ մակերեսով բնակավայրի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասն առանց մրցույթի կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել քաղաքացի Վարդան Արշավիրի Ղազարյանին՝ առևտրի տաղավար կառուցելու համար:
2. Վարդան Արշավիրի Ղազարյանի հետ կնքել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ 10 /տասը/ տարի ժամկետով՝ 4000 /չորս հազար) դրամ տարեկան վարձավճարով և ապահովել գույքային իրավունքների պետական գրանցումը:
3. Տարեկան վարձավճարը ենթակա է վճարման յուրաքանչյուր հաշվետու տարվա՝ պայմանագրի կնքման օրվանից սկսած մինչև տասնհինգերորդ օրը: Սահմանված

ժամկետներում վճարումներ չկատարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար հաշվարկել տույժ՝ տարեկան վճարի գումարի 0.5 տոկոսի չափով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թվական, հոկտեմբերի 4

գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«5» հոկտեմբերի 2017 թվականի N 29

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 27 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի 2017 թվականի սեպտեմբերի 28-ի «ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Մ. Մկրտչյան փողոցի թիվ 8 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված բնակելի տունն օրինականացնելու մասին» N 27 որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Քաղաքացի Արտավազդ Աբովյանին սեփականատիրության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Մ. Մկրտչյան փողոցի թիվ 8 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում իր կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունը /արտաքին մակերեսը՝ 45,3 քմ, ներքին մակերեսը՝ 33,3 քմ/, ճանաչել օրինական:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2017 թվական, հոկտեմբերի 5
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2017 թվականի N 30

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 11 Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետով, ՀՀ վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 219[1] հոդվածի 2-րդ մասի դրույթներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 11 Ա որոշման N5 հավելվածի 7-րդ բաժնի 11-րդ կետի «թ». ենթակետից հետո ավելացնել հետևյալ նախադասությունը.

«ժ. Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է աղբահանության և սանիտարական մաքրման իրականացումը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2017 թվական, հոկտեմբերի 12
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» հոկտեմբերի 2017 թվականի N 31

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 22 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի 2017 թվականի օգոստոսի 21-ի N 22 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետի «սեփականության իրավունքով պատկանող» բառերից հետո «բնակարանի 1/2 բաժնից 51,3 քմ բնակելի տանը» բառերը փոխարինել «բնակարանի 1/2 բաժնից 51,3 քմ հատվածին» բառերով:

2) Որոշման 1-ին կետի «թիվ 8» բառերից հետո ավելացնել «բնակարան» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2017 թվական, հոկտեմբերի 18
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հոկտեմբերի 2017 թվականի N 32

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ Գ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Գ. Լուսավորիչ փողոցի թիվ 11 հասցեում գտնվող տնամերձ հողամասը /ծածկագիր՝ 04-069-032-039/ ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջներով, որոշում եմ.

1. Քաղաքացի Արտավազդ Հակոբի Սայադյանին սեփականաշնորհված 04-069-032-039 ծածկագրով 0,075 հա մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասին, ավել օգտագործվող 0,0028 հա հողամասը հատկացնել նրան:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2017 թվական, հոկտեմբերի 20
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«10» հոկտեմբերի 2017 թվականի N 23

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 31.10.2007թ. N787-Ն հրամանով հաստատված կարգի 6րդ կետով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով կետով, ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի օգտագործման համար ոչ պիտանի գույքի դուրսգրման նպատակով՝ կարգադրում եմ.

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին /Վիգեն Տեր-Գրիգորյանին/ իրականացնել սույն կարգադրությունից բխող իրավական գործառույթներ:
3. Հանձնաժողովին /Վիգեն Տեր-Գրիգորյանին/ դուրսգրման աշխատանքների ավարտից հետո ներկայացնել համապատասխան փաստաթղթեր:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2017 թվական, հոկտեմբերի 10
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի
N23 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Վիգեն Տեր-Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Գոհար Սայադյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հովհաննես Թովմասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Վահագն Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստmailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«10» հոկտեմբերի 2017 թվականի N 24

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի «է» ենթակետով՝ *կարգադրում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Սայադյանին 2017 թվականի հոկտեմբերի 9-ին գործուղել քաղաք Արմավիր՝ Արմավիրի մարզպետարան:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի առաջատար մասնագետին (Դոնարա Խաչատրյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2017 թվական, հոկտեմբերի 10
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստmailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«25» հոկտեմբերի 2017 թվականի N 25

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի «է» ենթակետով՝ *կարգադրում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Սայադյանին 2017 թվականի հոկտեմբերի 25-ին գործուղել քաղաք Արմավիր՝ Արմավիրի մարզպետարան:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի առաջատար մասնագետին (Դոնարա Խաչատրյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2017 թվական, հոկտեմբերի 25
գ. Մուսալեռ